Հուլիսի 18-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 11 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման նախագծման, Հայաստանի Հանարպետության առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ի շենքի արտաքին գազատարին միացման, Հայաստանի Հնարապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակի ուսումնասիրության և Հայաստանի Հնարապետության Վայոց Ձորի մարզի դպրոցների համակարգչային դասարանների կահավորման ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող Հայոց եկեղեցու պատմության դասագրքերի ձեռքբերման ծրագիրը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրյանի կազմակերպության կողմից իրականացվող գործնական հմտությունների սիմուլիացիոն ուսումնական կենտրոնի հիմնման ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող՝ Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման և կահավորման ու Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացման և բարելավման ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի փոքր Մասրիկ համայնքի խմելու ջրագծի կառուցման և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Կամո համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի տեղադրման ծրագրերը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: